ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

14.08.2023
351-42

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բադասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բադասյան,

Ամերիկյան The New York Times-ի՝ այս տարվա ապրիլի 18-ի հրապարակման մեջ Ռուսաստան երկակի նշանակության ապրանքներ, տվյալ պարագայում կիսահաղորդիչներ (կոդեր 8517 և 8534) (վերա)արտահանող երկրների ցանկում հիշատակվում է նաև Հայաստանը: ԱՄՆ Արդյունաբերության և անվտանգության բյուրոյի կնիքով փաստաթղթում, որը հիշատակում է թերթը, ասվում է, որ 2022 թվականին Հայաստանը 515%-ով ավելի շատ չիպեր և պրոցեսորներ (կիսահաղորդիչներ) է ներմուծել ԱՄՆ-ից և 212%-ով ավելի շատ Եվրամիությունից, քան 2021 թվականին: Այնուհետ, ըստ հրապարակման, Հայաստանը նույն արտադրանքի 97%-ն արտահանել է Ռուսաստան:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Համապատասխանո՞ւմ է իրականությանը տվյալ ապրանքատեսակների վերաբերյալ The New York Times-ի՝ Հայաստանին վերաբերող հրապարակումը:

2. Թերթի ներկայացրած թվերը համապատասխանո՞ւմ են ՊԵԿ-ի՝ կիսահաղորդիչների (կոդեր 8517 և 8534) վերաբերյալ Հայաստան ներմուծումների և արտահանումների վիճակագրությանը: Եթե ոչ, խնդրում եմ ներկայացնել, Ձեր ունեցած տվյալները:

3. Ի՞նչ աշխատանքներ են տարվում ԱՄՆ-ի և Եվրամիության պատասխանատու պաշտոնյաների հետ պատժամիջոցների կամ դրանք շրջանցելու խնդրի շուրջ Հայաստանի վերաբերյալ ծագող անհանգստությունները փարատելու համար:

4. Ի՞նչ աշխատանքներ են տարվում հայկական բիզնես շրջանակների հետ, որպեսզի նրանք չհայտնվեն պատժամիջոցների թիրախում, եթե միաժամանակ ակտիվ բիզնես գործունեության մեջ են ռուսաստանցի, ամերիկացի կամ եվրոպացի իրենց գործընկերների հետ:

5. Հայաստանից Ռուսաստան 2022 թվականին հայկական արտադրության կիսահաղորդիչներ արտահանվե՞լ են:

6. 2022 թվականին ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր Հայաստանի կառավարությունը՝ երկակի նշանակության ապրանքների արտահանման գործընթացի կանոնակարգումը խստացնող որևէ որոշում կայացրե՞լ է: Եթե այո, խնդրում եմ նշել այն և դրա ընդունման նպատակը:

7. Համաձայն պաշտոնական տվյալների՝ 2022 թվականին Հայաստանից ՌԴ է արտահանվել 4.47 մլն դոլարի անօդաչու թռչող սարքեր (կոդ 8806), այն դեպքում, երբ 2021 թվավականին նման ապրանքատեսակի արտահանում չի գրանցվել ընդհանրապես: Խնդրում եմ նշել՝ 2022 թվականին ՀՀ-ից արդյո՞ք հայկական արտադրության անօդաչու թռչող սարքեր են ատահանվել Ռուսաստան: Եթե ոչ ու դա եղել է վերաարտահանում, խնդրում եմ նշել այդ ապրանքների ծագման երկիրը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան